Հաստատված է «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ
խորհրդի կողմից 2022 թվականի հուլիսի 7-ին

Փոփոխված է
**31/08/2023թ. թիվ 31.08.2023/1 խորհրդի որոշմամբ**

«Լիմիթլես Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ խորհրդի
նախագահ՝

Կիմ Ավանեսյան

# ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 3
ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 3
ԲԱԺԻՆ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ..... 3
ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 3
ԳԼՈՒԽ 3. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ..... 4

# ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կարգը սահմանում է <<Լիմիթլես ասեթ մենեջմենթ>> ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) և Ընկերության կողմից կառավարվող հրապարակային ներդրումային ֆոնդերի արտաքին աուդիտն իրականացնող անձի (այսուհետ նաև՝ աուդիտորական կազմակերպություն) ընտրության կարգը և չափանիշները:
2. Սույն կարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝
   1) **ֆինանսական կազմակերպություն՝** բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդ, ներդրումային ֆոնդի կառավարիչ.
   2) **աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր՝** աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից.
   3) **աուդիտորական խումբ՝** աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են Ընկերության կամ Ընկերության կողմից կառավարվող ներդրումային ֆոնդի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:
3. Սույն կարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված նշանակությունը, եթե այլ բան չի բխում կոնկրետ դրույթի բովանդակությունից:

# ԲԱԺԻՆ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

## ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Ընկերությունն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությանը, որը բավարարում է հետևյալ չափանիշներին՝
   1) Կազմակերպությունն ունի ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ),
   2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորն ունի ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ),

3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
4) աուդիտորական կազմակերպությունը Ընկերության հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս ՀՀ կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու Ընկերության, աուդիտորական կազմակերպության և ՀՀ կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

5. Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել Ընկերության կամ Ընկերության կողմից կառավարվող ներդրումային ֆոնդի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է Ընկերության կամ Ընկերության կողմից կառավարվող ներդրումային ֆոնդի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:
6. Միևնույն աուդիտորական կազմակերպությունը չի կարող 3 տարուց ավել անընդմեջ իրականացնել Ընկերության կամ Ընկերության կողմից կառավարվող ներդրումային ֆոնդի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:
7. Աուդիտորական կազմակերպության ղեկավար չի կարող լինել Ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, Ընկերության ներքին աուդիտի անդամը և ղեկավարը, ինչպես նաև Ընկերության, դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:
8. Աուդիտորական կազմակերպության հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելուց, նախատեսվում է նաև աուդիտորական հաշվետվություն (նամակ Ընկերության ղեկավարությանը) կազմելը:
9. Աուդիտորական կազմակերպության հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսվի նաև աուդիտորական կազմակերպության կողմից եզրակացություն ներկայացնելը՝
   1) Ընկերության՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար ներքին հսկողության համակարգի՝ Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.
   2) ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամբողջականության ու արժանահավատության մասին:

## ԳԼՈՒԽ 3. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

10. Աուդիտորական կազմակերպությունն ընտրվում է մրցութային կարգով:
11. Ընկերությունը աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման վերաբերյալ իր ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն: Հայատարարությունը հրապարակվում է մրցույթի նախատեսվող օրվանից առնվազն 10 օր առաջ և պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
   1) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը և վերջնաժամկետը,
   2) աուդիտորական կազմակերպությանը ներկայացվող պահանջները,
   3) մրցույթի անցկացման ամսաթիվը,

4) այլ էական պայմաններ:

12. Սահմանված ժամկետում մրցութին մասնակցելու առաջարկություններ չներկայացվելու դեպքում Ընկերության տնօրենի որոշմամբ մրցույթի անցկացման օրը և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը կարող է երկարաձգվել ևս 10 օրով:
13. Մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով Ընկերության տնօրենի որոշմամբ ձևավորվում է երեք անձից բաղկացած հանձնաժողով՝ Ընկերության տնօրենի գլխավորությամբ:
14. Մրցութային առաջարկությունները գնահատելիս հաշվի են առնվում՝
    1) աուդիտորական կազմակերպության հեղինակությունը (ճանաչվածությունը),
    2) կազմակերպության կողմից սպասարկված ֆինանսական կազմակերպությունների քանակը,
    3) աուդիտորական խմբի անդամների փորձը, որակավորումը,
    4) աուդիտի ծառայության արժեքը,
    5) այլ էական հանգամանքներ:
15. Մրցույթի արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:
16. Ֆոնդի արտաքին աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպության ընտրությունը ներկայացվում է Ընկերության խորհրդի (եթե ֆոնդն ունի մասնակիցների ընդհանուր ժողով, ապա ֆոնդի ժողովի) հաստատմանը:
17. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրությունը ներկայացվում է Ընկերության ժողովի հաստատմանը: